

թիւնը, որուն հետ կնքեց Հիւնքերա-
խակէլէսիի դաշինքը: Մէհէմմէտ Ալիի
դէմ պատերազմն անյաջող գնաց և Նէ-
ղիպայ պարտութիւնն վտանդի մէջ
դրաւ Օսմանեան ինքնակալութիւնը:
Մահմուտայ մահը վրայ հասնելով յա-
մին 1839, ամենայն ինչ անստուգու-
թեան մէջ մնաց:

Մուղան Ապտիւլ-Մէհիտ, անդրա-
նիկ որդին Մահմուտայ յաջորդեց հօրը
յամին 1839 յուլիսի 2, 'ի հասակի 16
տարուան, և թագաւորեց 22 տարի:
Եւրոպական տէրութիւնք միջամտելով
ընդդէմ փաշային Եղիպտոսի, նորէն Ա-
սորիքը ետ դարձուցին առ Օսմանեան
պետութիւնն յամին 1840, ետքէն
պաշտպանեցին թուրքիան ընդդէմ նո-
րանոր յարձակմանց Ռուսիոյ՝ բանալով
Ղրիմու պատերազմն յամին 1854, և
դաշինք գնեցով 'ի Բարիզ յամին 1856:

Մուղան Ապտիւլ-Ազիզ, երկրորդ որ-
դին Մահմուտայ յաջորդեց եղբօրն յա-
մին 1861 յունիսի 25, 'ի հասակի 31
տարուան, ու 'ի սկզբան շատ զեղեցիկ
յոյսեր կու տար՝ որոնք չստուգուեցան:

Բարիզու համալսարնական Արուես-
տահանդիսին առթիւ յամին 1867, Ա-
պտիւլ-Ազիզ Եւրոպական վեհապետաց
այցելութեան գնաց: Նախ Գաղղիա,
ետքն Անգղիա, Գերմանիա ու Աւստրիա,
և փոխադարձ ընդունեցաւ 'ի կոստան-
դնուպօլիս այցելութիւնք կայսրուհոյն
Գաղղիոյ, կայսերն Աւստրիոյ, Անգղիոյ
թագաժառանգին, Գերմանիոյ կայսե-
րական թագաժառանգին և ուրիշ թա-

գաւորականաց և իշխանաւորաց, Սա-
կայն տէրութիւնն հետզհետէ անջքանա-
լով իր անկարգ կառավարութեամբն,
անցեալ մայիսի վերջերը զինքը վար
ձգեցին աթոռէն՝ ճիշդ կոստանդնու-
պօլի առման դարեդարձին երկրորդ
օրը: Իրեն բնակութեանը համար նշա-
նակուած պալատն մէջ գահընկեցու-
թեանէն քանի մը օր ետև Ապտիւլ-Ազիզ
ինքը զինքն սպաննեց՝ մկրատով երակ-
ները բանալով 2 յունիսի 1876:

Մուղան Մուրատ Ե, անդրանիկ որ-
դի Ապտիւլ-Մէհիտի, յաջորդեց իր հօ-
րեղբօրը 'ի հասակի 36 տարուան: Բայց
դահակալութենէն տասն օր ետքը վրան
անբուժելի հիւանդութիւն մը եկաւ, և
օրէ օր աւելի ծանրացաւ, որով անկա-
րող համարուեցաւ թագաւորելու. ա-
նոր համար երեք ամիսէն ետքը վար
առնուեցաւ աթոռէն 31 օգոստոսի
1876:

Մուղան Ապտիւլ-Համիտ Բ, երկրորդ
որդին Ապտիւլ-Մէհիտի, յաջորդեց իր
եղբօրն 'ի հասակի 34 տարուան յամին
1876 օգոստոսի 31, և է երեսներորդ
չորրորդ Օսմանայ ցեղէն, և քսաներորդ
ուխերորդ սկսեալ կոստանդնուպօլիս
առմանէն:

Թուրքիոյ արքայական ցեղը, որուն
նախահայրն է Օսման Ա, որ հաստա-
տեց թագաւորութիւնը Գոնեայի մէջ
յամին 1299, կը տևէ 577 տարուա-
նէ 'ի վեր, իսկ թագաւորութեան ա-
թոռն կոստանդնուպօլիս փոխադրուե-
լէն 'ի վեր 423 տարի է:

ՔԱՂԱՔԱՆԱՆ ԲԱԺԱՆՈՒՄՆ ԹՈՒՐԻՔՈՑ

Օսմանեան պետութիւնն ըստ երից մասանց աշխարհի, որոնց մէջ կը տարա-
ժուի, երեք մեծամեծ մասունք կը բաժնուի. Եւրոպական մասը կ'ըսուի Ռուսի-
լի, ասիականն՝ Անատոլու, և ասորիկեանն ըստ զանազանութեան գաւառացն
զանազան անուն ունի: Եւ անմիջական կալուածներն ըստ արդի կարգադրու-

Թեան կը բաժնուին այլ և այլ կուսակալութիւն կամ նահանգ (վիշայէք), նահանգը՝ գաւառ (ասնձագ), գաւառը՝ վիճակ (գազա), վիճակը՝ գեհ (նահիէ): Կուսակալը կամ նահանգապետը կ'ըսուի վալի, գաւառակալը՝ Միշրէսարըֆ, վիճակակալը՝ Գայնագամ, իսկ գեհակալը՝ Միշտիր:

Քանի մը նահանգներ ալ կան հարկատու, ինքնազուխ իշխանութեամբ:

ԵՒՐՈՊԱԿԱՆ ԹՈՒՐԻՒՄ

Նահանգք	Նահանգագրութիւնք
Ադրիանուպօլիս	Ադրիանուպօլիս
Բրիգրին	Բրիգրին
Դանուբ	Ռուսնուբ
Եաննա	Եաննա
Ըշդոտա	Ըշդոտա
Թեսաղոնիկէ	Սելանիկ
Պոննա	Պոննա
Կղզիք Արշիպեղազոսի	Տարտանէլ
Կրետէ կղզի	Հաննա

Կոստանդնուպօլիս վիլայէթ չկազմէր, այլ ստիկանութեան պաշտօնէին իշխանութենէն կախումն ունի: Դարձեալ նոյն պաշտօնէին իշխանութենէն կախումն ունին հետեւեալ սանճագներն ալ. Չէքմէձէ, որուն զազաններն են, Պէոյիշք-Չէքմէձէ, Քիշիշք-Չէքմէձէ, Չադայձա, և Թէրքօզ. ինչպէս նաև զազաններն, Քիլիս, իշխանաց կղզիք, և Գարդալ (ասիակողմ). դարձեալ նոյն պաշտօնէին իշխանութենէն կախումն ունի սանճագն Խոճա-Եջէի, որուն զազաններն են. Իզմիտ, Ատա-Բագար, Ազ-Հիսար, Շէյիլէր, Կէյվէ, Հէրուք, Քանտրէ, Գարա-Վոշալ, Դարաքլը, Եայուլա:

ԱՍԻԱԿԱՆ ԹՈՒՐԻՒՄ

Նահանգք	Նահանգագրութիւնք
Այտըն	Չմիւռնա
Անկիւրիա	Անկիւրիա
Ատանա	Ատանա
Բարեւոն	Բարեւոն
Բերիա	Բերիա
Գասդամպօլ	Գաստամպօլ
Գոննա	Գոննա
Դամասկոս	Դամասկոս
Էմէն	Հոտէյա
Լիբանան	Տէյր-էլ-Գամր
Կարին	Էրզրոում
Հեճազ	Ճետտա
Միջագետք	Տիգրանակերտ
Ոլիմպեան	Պրուսա
Սեբաստիա	Սըւազ
Տրապիզոն	Տրապիզոն

ԱՓՐԻԿԵԱՆ ԹՈՒՐԻՒՄ

Տրիպօլիս	Տրիպօլիս
----------	----------

ՀԱՐԿԱՏՈՒ ԵՄՈՒՆԳՔ

ԵՒՐՈՊԱ. — Բուժանիա (Պուղտան և Լ.Ֆլաք), մայրաքաղաք Պուրբէշ. — Սե-
րուիա (Սըրֆ), մայրաքաղաք Պելկրատ:

ԱՍԻԱ. — Սամոս (Սուսամ ատաւար):

ԱՓՐԻԿԷ. — Եղիպտոս, մայրաքաղաք Գահիրէ. — Թունուզ, մայրաքաղաք
Թունուզ:

ՄԱԿԵՐԵՒՈՅԹ ԵՒ ԲՆԱԿԻՉՔ

Անմիջական կալուածք յերրոպա	364034 ք. քլմ:	8,500000 րն.
Հարկատու Նահանգք (Բուժանիա և Սերուիա)	164528 »	5,850000 »
Անմիջական կալուածք յԱսիա և Սամոս	1,927156 »	13,205000 »
Անմիջական կալուածք և հարկ. Նահ. յԱփրիկէ	3,262032 »	20,072000 »
	5,747750 ք. քլմ:	47,627000' րն.

ԱՆՄԻՋԱԿԱՆ ԿԱՂՈՒԱՄՔ ՅԵՒՐՈՊԱ

ՎԻԱՅԵՐԹՔ	Քառակուսի քիլոմէրք	Քրիտոննայք Հրէայք	Մահմետականք	Բովանդակ	
Ազրիանուպոլիս Կոստանդնուպոլիս	66133	827759	522135	1,349894	
		144210	183540	327750	
Բրիզըրին	52585	550537	789934	1,340471	
Ըշգոտուա					
Դանուբ	87109	1,176017	819226	1,995243	
Եաննա	35901	460601	250649	711250	
Թեսաղոնիկէ	51649	598731	429410	1,028141	
Պոննա	60569	856797	480596	1,337393	
Կրետէ կղզի	8616	162000	38000	200000	
Չինուրք	ցամաքային ծովային		82539	82539	
			23355	23325	
		362562	4,776652	3,619353	8,396005

Յաւելլու է հինգ կղզիքն Եւրոպակողման ափանց, որ են Թասոս կամ Թաշոս, Սամոթրակէ կամ Սէմէնտէրէք, Իմպրոյ, Լիմնոյ կամ Ստալիմէն, Ալիոստրատի, որոնց բոլորական մակերևոյթն է 1475 քառակուսի քիլոմէրք, և բնակիչն է իբր 25000 հոգիք: Դարձեալ հաշուելով Կոստանդնուպոլիս քաղաքին բնակաց անհաստատ թիւը, Եւրոպական Թուրքիան կ'ունենայ բնակիչ իբր 8 1/2 միլիոն, ուրոնք ըստ կրօնից կը բաշխուին. ոչ-մահմետականք 4,914472, մահմետականք 3,585528:

ԱՆՄԻՋԱԿԱՆ ԿԱՂՈՒԱՄՔ ՅԱՍԻԱ

ՎԻԱՅԵՐԹՔ	Քառ. քիլոմ.	Բնակիչ
Կ.Պոլիս (ասիակողմ)	12802	796000
Պրուսա	74792	1,030244
Ալաշըն	51688	1,040570
Կղզիք ասիակողման	14548	431197
Կիպրոս	9537	135000
Գաստամպուլ	53659	772010
Անկիւրիա	69379	514080
Գոննա	103766	755045

Ատանա	36947	335520
Տրապիզոն	37256	938140
Սեբաստիա	64275	571808
Կարին	132223	792104
Տիգրանակերտ	97500	708288
Պաղտատ	242277	2,000000
Հալէպ	105561	535714
Ասորիք	171229	518750
Հէնազ և Էմէն, և այլն	649164	1,296845

Բովանդակ 1,926602 քառ. քիլոմ. և 13,171000 բնակիչ :

ՎԼԽՍԻՈՐ ՔԱՂԱՔԲ

Եւրոպական թուրքիոյ գլխաւոր քաղաքաց բնակիչներուն մերձաւոր թիւն է. Կոստանդնուպօլիս՝ ըստ նոր աշխարհահամարի մը 4-500000 բնակիչ, ըստ այլոց 600000 բնակիչ, որոնցմէ 110000 հոգիք ասիականոյն կը բնակին. իսկ ըստ հաւանական կարծեաց Կոստանդնուպօլիս ունի իբր մէկ միլիոն բնակիչ: Ադրիանուպօլիս 100-150000, Սելանիկ 60-80000, Պարայեւոյ 50000, Փիլիպպուպօլիս 45000, Կէյիպօլու 20000: — Ասիական թուրքիոյ գլխաւոր քաղաքաց բնակիչներուն մերձաւոր թիւն է. Զմիւռնա 150000, Դամասկոս 120000, Պաղտատ 10 0000, Պերութ 100000, Հալէպ 70000, Պրուսա 60000, Կարին 60000, Մանիսա 60000, Տրապիզոն 50000, Երուսաղէմ 25000:

ՀԱՐԿԱՏՈՒ ՆԱՀԱՆԳԲ

ՌՈՒՄԱՆԻԱ. — Մակերևոյթ 120973 քառակուսի քիլոմէդր, և բնակիչ իբր 4,500000 :

Ըստ դաւանութեան այս 4 միլիոն ու 1/2 բնակիչք կը բաշխուին. յունադասանք իբր 4,250000, կաթոլիկք 45-50000, բողոքականք 30000, Հրէայք 150000 (?), Հայք 8400, և Լիբրովանք 8000 :

Ըստ հպարտակոչքեան պաշտօնական տեղեկութիւնները կու տան իբր 51427 օտար տերութեանց հպատակք. այսինքն Աւստրիոյ 28186, Յունաստանի 9545, Բրուսիոյ 3618, Անգղիոյ 2823, Ռուսիոյ 2706, թուրքիոյ 2031, Գաղղիոյ 1142, Իտալիոյ 167, և ուրիշ ազգաց 569:

Քաղաքաց բնակիչքն են. Պոքրէշ 200000, Եաշ 90000, Կայաց 80000, Պոդոլանի 37594, Բլէսդի 30000, Պրայիւա 25767, Գրայոլա 22767, Խամայիւա 20000 :

ՍԵՐՈՒՒԱ. — Մակերևոյթ 43555 քառակուսի քիլոմէդր, բնակիչ 1, 338505. Ըստ ազգայնութեան յամին 1866 կը բաշխուէին 1, 058189 Սերուիացիք, 127545 Ռուհք, 24607 Չինկեանէք, 2589 Գերմանացիք, 3256 այլևայլ ազգէ:

Ըստ դաւանութեան կը բաշխուին 3409 կաթոլիկք, 352 բողոքականք, 1560 հրէայք, 4965 մահմետականք, մնացածներն յունադասանք:

Մայրաքաղաքն է Պելլրատ, որուն բնակիչն է 26674 առանց հաշուելու զինուորները :

ՍԱՄՈՍ. — Մակերևոյթ 550 քառակուսի քիլոմէդր, բնակիչ 34131, որոնցմէ շուրս կան փոքր Ասիոյ ծովեզերաց վրայ 13000 հպատակք Սամոսի :

ԵԳԻՊՏՈՍ — Մակերևոյթը կը բովանդակէ հանդերձ 1874 տարւոյն աշխարհակալութեամբք իբր 2,252000 քառակուսի քիլոմէդր, և զբնթէ 17 միլիոն բնակիչ ունի, այսինքն

Եղիպոսու առանձնակ	550630	ք.	քիւրմ:	և	5,252000	բն.
Նուպիա	864500	«	«	«	1,000000	«
Հին կալուածք յեթովպիա.	2,918000	«	«	«	5,000000	«
Տարֆուր	275300	«	«	«	5,000000	«
Սահմանակից երկիրք	169400	«	«	«	700000	«

2,252000 ք. քիւրմ: և 16,922000 բն.

Եղիպոսու բնակող 79696 հպատակք կան օտար տէրութեանց, որոնք հետևեալ կերպով կը բաշխուին. Յոյնք 43000, Գաղղիացիք 13000, Իտալացիք 13906, Աւստրիացիք 6300, Անգղիացիք 6000, Գերմանացիք 1100, այլապէս ազգէ 1390.

Գլխաւոր քաղաքաց բնակիչքն են. Գահիրէ (19120 օտարականք) 349883, Աղէքսանդրիա (47316 օտարականք) 212054, Տամիադ (50 օտարականք) 29383, Ռոզէդոզա (10 օտարականք) 15002, Սիւվէյզ (2400 օտարականք) 13498, Բորք-Սայիտ (4210 օտարականք) 8671:

Դրիթմի. — Մակերևոյթն հանդերձ գաւառքն Բարկա և Ֆէղզան է իբր 891900 քառակուսի քիլոմէդր, բնակիչք գրեթէ 1,150000.

Քաղաքաց բնակիչքն են. Դրիթուի կամ Դարապուլուս 30000, Պէնդազի 6-7000, Մուրղուք 11000:

ԴՈՒՆՈՒՋ. — Մակերևոյթն է իբր 118400 քառակուսի քիլոմէդր, բնակիչն 1,200000. որոնցմէ են. Հրէայք 45000, կաթողիկէ 25000, Յոյնք 400 և նորադանդք 100, մնացածը մահմետականք:

Մայրաքաղաքն է Դունուզ, որ ունի 120000 բնակիչ:

ԵՐԿԱԹՈՒՂԻԲ ԹՈՒՐԻԲՈՑ

Թուրքիոյ երկաթուղիքն հետևեալքն են, թէ շահաբերութեան (exploitation) գծերն և թէ շինութեան գծերն:

ա. Կոստանդնուչայօլու — Պէլլուս, անցնելով ընդ Ադրիանուչայօլու և Փիլիպպոնուչայօլու: Մինչև հիմա շինուած է 560 քիլոմէդր:

Պէլլովայէն մինչև Նիշ ծրագրուած գծին երկայնութիւնն է 300 քիլոմէդր: Նիշ այս գիծն երկու ճիւղ պիտի բաժնուի գէպ 'ի Ալէքսինաց, Սերուիոյ գծին հետ միանալու համար:

բ. Տէտէ Արաձ — Ադրիանուչայօլու լմնցած է 145 քիլոմէդր: Այս գիծը բացուեցաւ 1 օգոստոսի 1872 ամին, և շատ կարևոր է Պուլղարիոյ ցորենի վաճառականութեան համար: — Տէտէ Ալաճի մտ է Էնոսի նաւահանգիստը

Մարմարայի վրայ, որ հիմա աննաւարկելի է, և բոլոր շրջապատը ճախճախուտ:

գ. Ադրիանուչայօլու — Շուսլու անցնելով ընդ Եւանչայօլու, 300 քիլոմէդր: — Դէպ 'ի Շուսլու պիտի բաժնուի Ադրիանուչայօլու — Փիլիպպոնուչայօլու գծէն Հարմանլը կայարանէն: Շինուած է մինչև Եւանչայօլու 130 քիլոմէդր:

դ. Վառնա — Ռուսաձոզ, 224 քիլոմէդր. անգղիական ընկերութիւն մը շինեց, հիմա ալ Հիւրը ընկերութիւնը կը բանեցընէ:

ե. Սեւանիկ-Իսկիւչայ-Միդրուլիցա, 362 քիլոմէդր: Սկսեալ Միդրուլիցա յէն, Պոսնիոյ մէջ, այս գիծը պիտի երկարաձգուի անցնելով Նովի-Բազար, Բըիէբուլէ, Պոսնա-Սարայ (Սարայնոյ),